ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՎԱԳ ԱՐՔԵՊՍ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ԱՅՑԸ ՇՎԵԴԻԱ

Սույն թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 1-ը Շվեդիա այցելեց Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանը: Սրբազան Հայրը, լինելով Իրաքի Քրիստոնեական Եկեղեցիների Խորհրդի քարտուղարը, Շվեդիա էր ժամանել Շվեդական Եկեղեցու հրավերով՝ մասնակցելու համար Շվեդական Եկեղեցու Սինոդի նիստի բացմանը: Սրբազան Հոր հետ Ժողովի էին եկել նաև Ասորի Օրթոդոքս Եկեղեցու արքեպիսկոպոս, Բաղդադի և Բասրայի թեմի առաջնորդ Սևերիուս Հաննա Հաուան, Ասորի կաթողիկե Եկեղեցու Արքեպիսկոպոս և Բաղդադի առաջնորդ Մաթթի Շաբա Մաթոկան, արքեպիսկոպոս Մար Գեորգիուս Սլիուան, Քաղդեական Կաթողիկե Եկեղեցու ներկայացուցիչ Իշլեմոն եպս. Վարդունին, Բաղդադի Ավետարանչական Եկեղեցու ներկայացուցիչ Էսթաուրի Յակոբ Արթինը:

Իրաքից ժամանած պատվիրակության անդամները ժողովին ներկայացրեցին Իրաքի այսօրվա ներքաղաքական իրավիճակը, Իրաքում բնակվող քրիստոնյաների վիճակը և պատասխանեցին ներկաների հարցերին:

Ժողովին և սեմինարներին մասնակցում էր նաև Սկանդինավիայում Հայրապետական Պատվիրակի Փոխանորդ Հոգեշնորհ Տ. Ներսեհ աբդ. Խալաթյանը:

Սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը Սրբազան Հայրը հյուրընկալվեց Շվեդիայի հայ համայնքի կողմից: Հոկտեմբերի 29-ին Շիստայի եկեղեցու «Քրիպտոն» սրահում Ավագ արքեպիսկոպոսը հանդիպում ունեցավ Ստոքհոլմի, Սոդերթելիայի և Ուփսալայի հայոց համայնքների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով Իրաքում հայերի այսօրվա կացությունն ու խնդիրները:

Հաջորդ օրը Սրբազան Հայրը «Աքալլայի» եկեղեցում Սուրբ Պատարագի ընթացքում քարոզեց հայ հավատացյալներին: Հավարտ Սուրբ Պատարագի, ի պատիվ Սրբազան Հոր, գաղութի կողմից կազմակերպվեց պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում դրամական օգնություն հավաքվեց Իրաքի կարիքավոր հայորդիների համար: Հոկտեմբերի 1-ին Սրբազան Հայրը մեկնեց Իրաք:

ՇՎԵԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈՎՎՈՒԹՅԱՆ
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ